

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԲԿ-ՀՄԱԱԸՁԲ-25/6**

ք. Երևան

11.08.2025 թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ավանգարդ շին» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի և «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Գ. Կյուրեղյանի (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 06.08.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակն համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը (Հավելված N 1.2):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին և տեխնիկական բնութագրին համապատասխան (Հավելված N 1 և Հավելված N 1.1):

1.3 Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է համարվում Պատվիրատուի կողմից աշխատանքները սկսելու վերաբերյալ ծանուցման մեջ նշված օրը և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծով նախատեսված 90 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են պայմանագրի հավելված N 2-ում:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
- բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,
- գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,
- դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցողիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ հավելված N 2-ով սահմանված պայմանագրի կատարման փուլերը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.10 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանման ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները առնվազն արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն կետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ալտ' թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ալտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ալտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

5.1 **Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 209 184 918 (երկու հարյուր ինը միլիոն մեկ հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր տասնութ) ՀՀ դրամ, որից 34 864 153 (երեսունչորս միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողին բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճար կտարամադրվի միայն այն պարագայում, երբ Կապալառուի կողմից իրականացված կլինեն շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ, իսկ նշված միջոցառումների իրականացված լինելու փաստը կարձանագրվի և պատվիրատուին գրավոր կտեղեկացվի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններն իրականացնող կազմակերպության կողմից:

Ընդ որում կանխավճար կարող է հատկացվել յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում կատարվելիք աշխատանքների համաձայնագրով նախատեսված արժեքի 30 տոկոսի չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը

որոշվում է համաձայնագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝ $ԱԳ=ԿԾ*ՊՏ$

ԱԳ – ավելացվող գումար,

ԿԾ – պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%-ը,

ՊՏ – պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնան-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $ՎԳ=ՄԳ/ԼԳ \times ԿԾ$, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ԼԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	350 000 ՀՀ դրամ
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	1 000 000 ՀՀ դրամ
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	700 000 ՀՀ դրամ

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 6) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.12 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը (համաձայնագրերը) կնքում, իսկ ապահովումները ներկայացնում, կամ տուժանքի ձևով ներկայացված ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե»
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Հ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն»
ՀՎՀՀ 02565827

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ՝

Գործընկեր-1
«Ավանգարդ շին» ՍՊԸ
ք. Երևան, Լենինգրադյան փ. 23/07
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043332430000
ՀՎՀՀ 05019792

Գլխավոր քարտուղար


Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.


Տնօրեն՝


Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր-2

«Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ
«Ք Երևան, Ս. Տարոնցի
նրբ. 2. 10 բն. 3
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043331648000
ՀՎՀՀ 02279611

Տնօրեն՝


Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԻՊԱՅԻՆ (ՄՈԴՈՒԼԱՅԻՆ) ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

հազ.դրամ

Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակ	Միավորի արժեքը հազ. դրամ	Միավորի արժեքը հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
				1.31161251		
	1-1. Համաշինարարական աշխատանքներ					
1	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռների տեղադրում Դ-5, Դ-5"	քմ	1.746	118.305	90.198	206.560
2	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, մախնական մշակումով ԴՓ-021 մախնաներկով	քմ	3.5	2.003	1.53	7.011
3	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	4	41.578	31.700	166.312
4	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	746	1.192	0.909	889.051
5	Մամլագրամիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	9	12.539	9.560	112.848
6	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրամիտե սալերով	գծմ	16	1.539	1.173	24.623
7	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	3.5	9.739	7.425	34.085
8	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	368.45	12.438	9.483	4582.770
9	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	500	5.817	4.435	2908.742
10	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎՔ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.44	18.688	14.248	4811.043
11	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	117	17.413	13.276	2037.317

12	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	34.3	1.192	0.909	40.877
13	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների երեսում (տակից) ОСП - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	50	4.551	3.470	227.563
14	ОСП սալի մասնակի լաքապատում	քմ	540	0.555	0.423	299.653
15	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	զծմ	136.50	4.235	3.229	578.047
16	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Φ 150մմ	հատ	15	6.683	5.095	100.243
17	Ջրիոս խողովակների տեղադրում 150x150մմ	զծմ	76.2	5.098	3.887	388.447
18	Գունավոր ներկվածքով թիթեղ 700մմ լայնությամբ	քմ	60.55	5.503	4.195	333.180
19	Թասակ գունավոր ներկվածքով թիթեղից, 0,55մ հաստ.	քմ	39.94	7.484	5.706	298.892
20	Գունավոր ներկվածքով թիթեղ 300մմ լայնությամբ	քմ	28.860	5.503	4.195	158.804
21	Բետոնե հարթեցնող շերտ B7.5 դասի բետոնով	խմ	2.000	41.698	31.792	83.397
22	200մմ բարձրությամբ միաձուլ բետոնե պատերի պատրաստում B7.5 դասի բետոնով	խմ	0.61	154.943	118.132	94.515
23	Արցունքաթափ գունավոր ներկվածքով թիթեղ 250մմ լայնությամբ	քմ	2.080	5.503	4.195	11.445
24	Գունավոր ներկվածքով թիթեղ 150մմ լայնությամբ	քմ	6.450	5.503	4.195	35.491
25	Թասակ ցինկապատ թիթեղից գործարանային ներկածածկույթով	քմ	2.050	7.484	5.706	15.341
26	Տանիքի ցվիցի իրականացում գունավոր, ներկված 7024 գույնի 15*240մմ չափերի մետաղական սայրինգներով, Եզրապատված 24*18 պրոֆիլից, ամրացնելով փայտե 50*50 չափսի չորտուներով, կավարամածի պատրաստումով՝ հականեխիչ և հակահրդեհային մշակումով	քմ	149	17.759	13.539	2646.022
27	Օդափոխության հորանի ОСП սալերի տեղադրում 10մմ հաստությամբ	քմ	29.4	2.962	2.258	87.078
28	Օդափոխության հորանի Գլանափաթեթավոր, բիտումա-պոլիմերային СБС մոդիֆիկացված նյութից ջրամեկուսիչ թաղանթի փռում	քմ	29.4	3.035	2.314	89.225
29	Օդափոխության հորանի Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում	քմ	29.4	11.074	8.443	325.568
30	Օդափոխության հորանի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեստիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	2.1	262.226	199.926	550.674
31	Օդափոխության հորանի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	0.817	611.774	466.429	499.820
32	Օդափոխության հորանի ցինկապատ թիթեղ $\delta=0.5$ մմ	քմ	56.2	5.503	4.195	309.244

33	Հարդարման աշխատանքներ Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	1.9	7.935	6.050	15.077
34	V-2, V-4, V-5 վիտրամների վերևի մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	13	5.277	4.023	68.604
35	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1076	2.380	1.815	2560.992
36	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	68	1.735	1.323	118.005
37	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	629.3	2.670	2.035	1679.920
38	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	11.6	3.570	2.722	41.417
39	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	4.6	12.457	9.497	57.300
40	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստությամբ, ստատների տեղադրումով	քմ	74.7	7.165	5.463	535.203
41	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЎДИНГ	քմ	76.7	5.191	3.957	398.112
42	Կախովի առաստաղի պատրաստում (ARMSTRONG)	քմ	10	10.695	8.154	106.949
43	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տմ	0.589	724.952	552.718	427.310
44	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տմ	0.589	38.399	29.276	22.634
45	Արտաքին հարդարում V-4, V-5 արտաքին վիտրամների վերևի մասի երեսապատում ալյումինե «Alukobond» քիթեղով	քմ	13.5	34.348	26.187	463.691
46	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	215.76	5.335	4.068	1151.122
47	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	259.96	1.299	0.990	337.647
48	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	24	14.991	11.430	359.791
48	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0.96	62.975	48.013	60.456
49	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քմ ուղ. պրոեկց.	215.83	1.039	0.792	224.182

50	Արտաքին պատերի երեսապատում 8մմ հաստությամբ ֆիբրացեմենտե սալերով, ներկված գործարանային պայմաններում ջերմամշակմամբ, առանց ասբոցեմենտային հավելումի RAI 2007 և RAI 1015 օրմին	քմ	585	22.205	16.930	12990.122
51	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն խողովակ 50x43մմ	զծմ	110	2.250	1.716	247.520
52	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն պրոֆիլ 50x60մմ	զծմ	100	2.250	1.716	225.018
53	Ապակեպլաստե մանրաթելային ուղղանկյուն պրոֆիլ 50x150մմ	զծմ	10	5.700	4.346	57.005
54	Ապակեպլաստե մանրաթելային անկյունակներ պատրաստված ուղղանկյուն խողովակից 50x43մմ	զծմ	15	1.125	0.858	16.876
55	Ալյումինե մոնտաժային ձևավոր պրոֆիլ 32x8մմ	զծմ	100	1.200	0.915	120.009
56	Մետաղական հիմնակմախքը ուղանկյուն խողովակներով 60x40x2.5	զծմ	4	2.050	1.563	8.201
57	Մետաղական հիմնակմախքը ուղանկյուն խողովակներով 40x25x2.5	զծմ	5	1.325	1.010	6.626
58	Պտուտակային, ապակեպատ ամբարձիչի մոնտաժում հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք՝ առանց սարքի արժեքի	հատ	1	513.030	391.144	513.030
ԸՆԴԱՄԵՆԸ						45766.705
1-2. Ջեռուցում						
1	Նկուղ Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում և փորձարկում 34 հատ	կվտ	4.454	0.908	0.692	4.044
2	Ջերմակարգավորիչ փական Փ20մմ	հատ	6	8.487	6.471	50.922
3	Փական անցումային Փ20մմ	հատ	8	5.802	4.423	46.414
4	Ավտոմատ օդահան փական Փ15մմ	հատ	6	2.609	1.989	15.651
5	Ավտոմատ օդահան (ванты) Փ20մմ	հատ	1	5.444	4.150	5.444
6	Մետաղ ռադիատորների և խողովակների ամրացման համար	կգ	5	0.671	0.511	3.354
7	0,00միչից վերև Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում և փորձարկում h=500մմ 451հատ, h=350մմ 33հատ	կվտ	63.404	0.908	0.692	57.570
8	Ջերմակարգավորիչ փական Փ20մմ	հատ	1	11.052	8.426	11.052
9	Փական անցումային Փ20մմ	հատ	1	6.102	4.652	6.102
10	Ավտոմատ օդահան փական Փ15մմ	հատ	1	5.444	4.150	5.444
ԸՆԴԱՄԵՆԸ						205.997
1-3. Օդափոխություն (նկուղ)						

1	Ներածնան-արտածնան սարք L _ն =1470խմ/ժամ L _ա =1320խմ/ժամ, օդատաքացուցիչ Q _տ =7կվտ	կ-տ	1	4024.690	73.254	4024.690
2	Օդափոխիչ կանալային L=125խմ/ժամ P=110Պա N=0,7կՎտ	հատ	1	35.106	6.004	35.106
3	Ճաղաշար պլաստմասայից Ф200մմ	հատ	5	0.457	0.348	2.284
4	Նույնը 200x100	հատ	3	0.525	0.400	1.575
5	Նույնը 200x200	հատ	1	0.600	0.457	0.600
6	Նույնը 300x200	հատ	6	0.900	0.686	5.400
7	Նույնը 300x250	հատ	6	1.200	0.915	7.201
8	Օդի կարգավորիչ փական ձեռքի կարգավորումով Ф100մմ	հատ	5	8.572	6.535	42.859
9	Նույնը, 100x100մմ	հատ	3	7.006	5.342	21.018
10	Նույնը, 150x150մմ	հատ	2	8.056	6.142	16.112
11	Նույնը, 200x100մմ	հատ	12	8.056	6.142	96.673
ԸՆԴԱՍԵՆԸ						4253.518
1-4. Օդափոխություն 0,00 միջից վերև						
1	Ներածնան-արտածնան սարք L _ն =3600խմ/ժամ L _ա =3200խմ/ժամ, օդատաքացուցիչ Q _տ =27,6կվտ	կ-տ	1	4273.659	73.254	4273.659
2	Ներածնան-արտածնան սարք L _ն =2400խմ/ժամ L _ա =2400խմ/ժամ, օդատաքացուցիչ Q _տ =17,4կվտ	կ-տ	1	3908.484	73.254	3908.484
3	Ներածնան-արտածնան սարք L _ն =5885խմ/ժամ L _ա =4860խմ/ժամ, օդատաքացուցիչ Q _տ =42,6կվտ	կ-տ	1	6677.015	73.254	6677.015
4	Ներածնան սարք L _ն =1820խմ/ժամ օդատաքացուցիչ Q _տ =13կվտ	կ-տ	1	3182.312	73.254	3182.312
5	Օդափոխիչ կանալային L=540խմ/ժամ P=200Պա N=0,8կՎտ	հատ	1	47.088	6.004	47.088
6	Օդափոխիչ կանալային L=270խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	35.106	6.004	35.106
7	Օդափոխիչ կանալային L=100խմ/ժամ P=100Պա N=0,5կՎտ	հատ	2	51.445	6.004	102.889
8	Օդափոխիչ կանալային L=325խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	38.374	6.004	38.374
9	Օդափոխիչ կանալային L=800խմ/ժամ P=220Պա N=0,8կՎտ	հատ	1	64.516	6.004	64.516
10	Ճաղաշար պլաստմասայից Ф200մմ	հատ	20	0.457	0.348	9.136
11	Նույնը 200x200	հատ	3	0.600	0.457	1.800
12	Նույնը 300x300	հատ	12	1.050	0.801	12.601

13	Նույնը 350x350	հատ	12	1.350	1.029	16.201
14	Նույնը 400x200	հատ	82	1.350	1.029	110.709
15	Նույնը 400x300	հատ	8	1.800	1.372	14.401
16	Նույնը 400x400	հատ	2	1.800	1.372	3.600
17	Նույնը 500x500	հատ	5	2.250	1.716	11.251
18	Ալյումինե, դրսի ճաղաշար 300x800	հատ	4	10.801	8.235	43.203
19	Նույնը 300x900	հատ	3	11.701	8.921	35.103
20	Նույնը 400x1000	հատ	3	15.301	11.666	45.904
21	Օդի կարգավորիչ փական ձեռքի կարգավորումով Φ 100մմ	հատ	20	8.572	6.535	171.434
22	Նույնը, 150x150մմ	հատ	2	7.756	5.913	15.512
23	Նույնը, 200x150մմ	հատ	3	8.056	6.142	24.168
24	Նույնը, 200x200մմ	հատ	65	8.056	6.142	523.648
25	Նույնը, 300x150 մմ	հատ	3	10.947	8.346	32.841
26	Տուփեր ցինկապատ թիթեղից $\delta=0.7$ մմ	քմ	57	7.532	5.743	429.337
27	Օդատար ցինկապատ թիթեղից $\delta=0.5$ մմ	քմ	17.6	8.621	6.573	151.737
28	Օդատարների մեկուսացում հանքային բամբակով $\delta=50$ մմ	քմ	35	1.007	0.768	35.236
29	Մետաղ օդատարների ամրացման համար	կգ	120	0.720	0.549	86.399
	ԸՆԴԱՄԵՆԸ					20103.664
	1-5, Ն-1---Ն-5 Ներածման համակարգերի ջերմամատակարարում					
1	Նկղ Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 Φ 25x3,5մմ	գծմ	18	4.163	3.174	74.932
2	Հաշվեկշիռ փական Φ 15մմ	հատ	1	8.016	6.112	8.016
3	Փական անցումային, խցանային Φ 25մմ	հատ	2	7.116	5.425	14.232
4	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Φ 25մմ	հատ	6	0.075	0.057	0.450
5	Նույնը, Φ 32մմ	հատ	4	0.165	0.126	0.660
6	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 40x32x40մմ	հատ	2	0.810	0.618	1.620
7	Φ 25x3,5մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով $\delta=10$ մմ	մ	18	0.525	0.400	9.451

8	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	0.6	0.720	0.549	0.432
1	0,00 միջից վերև Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 Φ25x3,5մմ	զծմ	11	4.163	3.174	45.792
2	Նոլյնը, Φ32x4,5մմ	զծմ	13	4.056	3.093	52.733
3	Նոլյնը, Φ40x5,6մմ	զծմ	133	6.557	4.999	872.122
4	Նոլյնը, Φ63x8,7մմ	զծմ	17	11.489	8.760	195.319
5	Ջաշվեկշիռ փական Φ15մմ	հատ	1	8.016	6.112	8.016
6	Նոլյնը, Φ20մմ	հատ	1	8.766	6.683	8.766
7	Նոլյնը, Φ25մմ	հատ	2	11.016	8.399	22.033
8	Փական անցումային, խցանային Φ25մմ	հատ	2	7.116	5.425	14.232
9	Նոլյնը, Φ32մմ	հատ	2	9.216	7.027	18.432
10	Նոլյնը, Φ40մմ	հատ	4	10.416	7.942	41.665
11	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Φ25մմ	հատ	4	0.075	0.057	0.300
12	Նոլյնը, Φ32մմ	հատ	6	0.165	0.126	0.990
13	Նոլյնը, Φ40մմ	հատ	10	0.435	0.332	4.350
14	Նոլյնը, Φ63մմ	հատ	2	1.140	0.869	2.280
15	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ40x32x40մմ	հատ	2	0.810	0.618	1.620
16	Նոլյնը, Φ40x40x63մմ	հատ	2	0.900	0.686	1.800
17	Նոլյնը, Φ63x25x63մմ	հատ	2	1.020	0.778	2.040
18	Շրջանցիկ ծունկ Φ25մմ	հատ	1	0.600	0.457	0.600
19	Նոլյնը, Φ32մմ	հատ	1	0.795	0.606	0.795
20	Նոլյնը, Φ40մմ	հատ	1	0.900	0.686	0.900
21	Φ25x3,5մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով δ=10 մմ	մ	11	0.525	0.400	5.775
22	Նոլյնը, Φ32x4,5մմ խողովակների	մ	13	0.600	0.457	7.801
23	Նոլյնը, Φ40x5,6մմ խողովակների	մ	133	0.750	0.572	99.758
24	Նոլյնը, Φ63x8,7մմ խողովակների	մ	17	1.050	0.801	17.851
25	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	26	0.720	0.549	18.720
ԸՆԴԱՄԵՆԸ						1554.485
1-6. Կաթսայատան սարքավորումներ						
1	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա «Северянин» Q=120կվտ հզորությամբ	կ-տ	1	872.861	67.547	872.861
2	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթսա «Северянин» Q=90կվտ հզորությամբ	կ-տ	1	785.720	67.547	785.720
3	Ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 120/250-40T մակնիշի (сдвоенный) G=3,57խմ/ժ, H=11,2մ, N=536--339վտ, n=2780---2080պտ/րոպ	կ-տ	1	387.448	21.343	387.448
4	Օդափոխության համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 60/250-40T մակնիշի (сдвоенный) G=4,96խմ/ժ, H=7մ, N=348--- 232վտ, n=2650---1520պտ/րոպ	կ-տ	1	637.978	21.343	637.978
5	(+3,3 միշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,324խմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440---1260պտ/րոպ	կ-տ	1	539.945	21.343	539.945

6	(-3,3 միշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,20խմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440---1260պտ/րոպ	կ-տ	1	485.482	21.343	485.482
7	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=11,15խմ/ժ, H=7,7մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ	կ-տ	1	365.663	21.343	365.663
8	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=6,8խմ/ժ, H=7,8մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ	կ-տ	1	349.324	21.343	349.324
9	Ընդարձակիչ անոթ թաղանթային V=600լ Փ750մմ H=1830մմ	հատ	1	65.067	6.424	65.067
10	Բաշխիչ և հավաքող կոլեկտոր պոլիպրոպիլենային խողովակից Փ125x17,1մմ L=1,45մ	հատ	2	44.340	33.806	88.680
11	Շվեյլեր N20 L=0,85մ 4հատ	մ	3,4	12.766	9.733	43.404
12	Ղեֆլեկտոր Փ250մմ	հատ	1	50.278	38.333	50.278
13	Օդատար ցինկապատ թիթեղից ձ=0,6մմ Փ250մմ	քմ	1,5	7.775	5.928	11.663
14	Ճկուն խողովակ Փ75x10,4մմ L=0,3մ	հատ	4	4.050	3.088	16.201
15	Նույնը. Փ63x8,7մմ L=0,3մ	հատ	4	3.600	2.745	14.401
16	Նույնը. Փ25x3,5մմ L=0,3մ	հատ	2	3.000	2.287	6.000
17	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 PPR Փ20x2,8մմ	զծմ	7	4.572	3.486	32.003
18	Նույնը. Փ25x3,5մմ	զծմ	8	4.088	3.117	32.703
19	Նույնը. Փ40x5,6մմ	զծմ	3	6.872	5.240	20.617
20	Նույնը. Փ63x8,7մմ	զծմ	15	11.324	8.634	169.865
21	Նույնը, Փ75x10,4մմ	զծմ	18	12.621	9.622	227.175
22	Նույնը, Փ110x15,2մմ	զծմ	5	18.885	14.398	94.424
23	Սողնակ կցաշուրթային ձեռքի կարգավորումով 30x66ք Փ80մմ	հատ	8	28.955	22.076	231.641
24	Փական անցումային խցանային Փ65 15x8ո	հատ	4	17.317	13.203	69.267
25	Նույնը, Փ40	հատ	1	9.216	7.027	9.216
26	Նույնը, Փ25	հատ	4	6.666	5.082	26.664
27	Նույնը, Փ20	հատ	19	6.216	4.739	118.103
28	Ավտոմատ օդահան փական Փ20մմ	հատ	8	6.559	5.001	52.473
29	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° Փ20մմ	հատ	4	0.051	0.039	0.204
30	Նույնը, Փ25մմ	հատ	7	0.096	0.073	0.672
31	Նույնը, Փ40մմ	հատ	3	0.315	0.240	0.945
32	Նույնը, Փ63մմ	հատ	9	1.125	0.858	10.126
33	Նույնը, Փ75մմ	հատ	16	1.950	1.487	31.202
34	Նույնը, 45° Փ75մմ	հատ	2	2.250	1.716	4.500
35	Փ20x2,8մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով ձ=10 մմ	մ	7	0.450	0.343	3.150
36	Նույնը, Փ25x3,5մմ խողովակների	մ	8	0.525	0.400	4.200
37	Նույնը, Փ63x8,7մմ խողովակների	մ	15	1.050	0.801	15.751
38	Նույնը Փ75x10,4մմ խողովակների	մ	18	8.105	6.180	145.894
39	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	18	0.720	0.549	12.960
ԸՆԴԱՄԵՆԸ						6033.872
1-7. Սառը ջրի մատակարարման ներքին ցանց						
1	Նկուղ Փ63x8,6մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչներով ձ=10 մմ	մ	5	6.436	4.907	32.178
2	Փական բրոնզե Փ20մմ	հատ	1	6.216	4.739	6.216
3	Փական անկյունային Փ15մմ	հատ	4	5.391	4.110	21.564
4	Լվացարանի ծորակ-խառնիչ	հատ	2	13.372	10.195	26.743
5	Համակարգի փորձարկում և վարակազերծում	զծմ	20	0.121	0.092	2.416

6	0,00 միջից վերև Ջրամատակարարման պողպատե խողովակների տեղադրում Φ57x3,5 մմ	զծմ	15	3.263	2.488	48.947
7	Փական բրոնզե Φ15մմ	հատ	12	5.391	4.110	64.691
8	Նույնը, Φ20մմ	հատ	2	6.216	4.739	12.432
9	Նույնը, Φ25մմ	հատ	1	7.146	5.448	7.146
10	Նույնը, Φ32մմ	հատ	1	9.261	7.061	9.261
11	Սողնակ Φ50մմ	հատ	3	15.217	11.601	45.650
12	Փական անկյունային Φ15մմ	հատ	38	5.391	4.110	204.854
13	Չակադարձ փական Φ32մմ	հատ	1	9.261	7.061	9.261
14	Ավտոմատ օդահան փական Φ20մմ (вантыз)	հատ	1	4.009	3.056	4.009
15	Ցնցուղի ծորակ-խառնիչ	հատ	3	57.925	44.163	173.775
16	Լվացարանի ծորակ-խառնիչ	հատ	16	20.422	15.570	326.753
17	Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչ	հատ	2	24.172	18.430	48.345
18	Ջրառման ծորակ Φ15մմ	հատ	8	6.021	4.590	48.167
19	Չրշեջ ծորակ Φ50մմ միացման գլխիկով, 20մ փողորակով և հակահրդեհային արկղով	կ-տ	6	71.817	54.754	430.899
20	Ջրաչափ Φ32մմ	հատ	1	42.918	32.722	42.918
21	Ջրի զտիչ Φ50մմ	հատ	1	13.703	10.448	13.703
22	Չամակարգի փորձարկում և վարակազերծում	զծմ	241	0.121	0.092	29.117
23	Պողպատե խողովակների յուղաներկում	քմ	15.2	1.793	1.367	27.279
24	Պողպատե խողովակների հիդրավլիկ փորձարկում	զծմ	85	0.113	0.086	9.626
ԸՆԴԱՄԵՆԸ						1645.951
1-8. Տաք ջրի մատակարարման ներքին ցանց						
1	Արևային ջրատաքացուցիչ JNG-30, V=300լ, կոլեկտորի տիպը վակումային, չափերը 2343x1560x1710մմ	հատ	1	495.557	4.110	495.557
2	Փական անկյունային Φ15մմ	հատ	2	5.391	4.110	10.782
3	0,00 միջից վերև Փական բրոնզե Φ15մմ	հատ	14	5.391	4.110	75.472
4	Փական անկյունային Φ15մմ	հատ	18	5.391	4.110	97.036
5	Չակադարձ փական Φ15մմ	հատ	1	5.616	4.282	5.616
6	Օդահան փական Φ20մմ (вантыз)	հատ	1	4.009	3.056	4.009
7	Ջերմակարգավորիչ փական Φ15մմ	հատ	5	8.016	6.112	40.080
8	Արևային ջրատաքացուցիչ JNG-30, V=300լ, կոլեկտորի տիպը վակումային, չափերը 2343x1560x1710մմ	զծմ	208	0.121	0.092	25.130
Ջրամակարգի փորձարկում և վարակազերծում						
ԸՆԴԱՄԵՆԸ						753.682
1-9. Կոյուղու ներքին ցանց						
1	Նկուղ Կեղտաջրի պոմպակայանի մոնտաժ Wilo Drain Lift 180լ բաքով 2 պոմպով 830x760x600(հ) N=1,75կվտ	կ-տ	1	2531.739	61.686	2531.739
2	Լվացարանների տեղադրում սիֆոնով	հատ	2	34.860	26.578	69.721
3	Զուգարանակոնքերի տեղադրում	հատ	2	74.071	56.473	148.142
4	Միզաման պատի սիֆոնով և ծորակով	հատ	1	29.596	22.565	29.596
5	0,00միջից վերև Լվացարանների տեղադրում սիֆոնով	հատ	22	26.160	19.945	575.512
6	Զուգարանակոնքերի տեղադրում	հատ	12	54.570	41.605	654.836
7	Միզաման պատի սիֆոնով և ծորակով	հատ	1	29.596	22.565	29.596
8	Չոսակների տեղադրում Φ50մմ	հատ	5	3.244	2.473	16.220
9	Չոսակների տեղադրում Φ100մմ	հատ	1	5.194	3.960	5.194
